

ՄԻ ՕՐ ՍԵՒՈՐԴԵԵԸՑ ԸՆԴԽԵՐՀՈՒՄ

Բաղդ ունէի ուզեկից լինել նորին Սրբութիւն ամենայն չայոց գերեզանիկ չայրապետին Թիֆլիսից Սլէքսանդրապոլ։ Վեհական հաճեցաւ եքեք օրի չափ մնալ Սանահի հոչակաւոր վանքում՝ սրբութիւններն երկրպագելու և այդ հինաւուրց տաճարի վերանորոգութեան համար նախապատրաստական կարգադրութիւններ անելու։ Այդ նպատակով Վեհական ուղեկցում էին իշխ. Պարոյր Երկ. Արդութեանց, որպէս Սանահի կալուածատէր, ճարտ. Ն. Գրիգորեանց, շինութեանց վարպետ ուստա Թաթոս, որի ձեռքով կատարել է Վեհական իշխանութեանց կառուցած բոլոր շինութիւնները և վերջապէս նկարիչ և լուսանկար։

Օդտուելով աղատ ժամանակից և Վեհից ստանալով պատշաճաւոր հրաման՝ որոշեցի մի փոքրիկ ուղերութիւն կատարել Սևորդեաց հոչակաւոր ձորերը, մինչև որ մի այլ անգամ հարկ եղած պատրաստութիւններով միջոց կունենամ զննել այդ և դրացի երկիրները, որոնց սովոր են «մոռացուած աշխարհ» անսւանել՝ շատ կողմերից մեզ անծանօթ լինելու պատճառով։ Դորանից էլ յարմար միջոց քիչ կըպատահէր. Մեծ չիւրի պատճառով այլտեղ էին ժողովուած Լոռուայ գրեթէ բոլոր քահանաները, ուրոնք միակ ուղեցոյցները կարող են լինել ուսումնասիրական նպատակով կատարած որեւէ ուղեգնացութեան ժամանակ։ Ինձ ուղեկցելու հաճութիւն ցոյց տուին պ. Գրիգորեանը, չաղբատի վանահայր արժ. Գեղամ վարդապետը և Քարինջ ու Մարց գիւղերի ծխատէրները։

Խոկապէս իմ նպատակն է դիտել չայոց այն բաղմաթիւ հոչակաւոր ձորերը, որոնցից մէկում

„մէծ վարդապետն Վանական՝ իրսկը աշխատութեամբը փուրեալ էր քարայրուն՝ ՚ի կատարս բարձրագոյն բարի միոյ, որ կայ ՚ի հանգեպ գեղջն՝ որ Լոռուան կոչի, ՚ի հարաւոյ կողմանէ Տաւուշ, ուրերքի... ժողովեալ բազում գրեանս, զի յոյժ ուսումնասէր էր ՚այլն այն...” (Կիրակոս Գանձ. իր.). Կամ ուր, ՚իշխանն Շահընշահ, ՚առեալ զիենն իւր և զմանկունսն՝ եւ զաղտագողի ՚ի ձորն անդ, „(մերձ քաղաքին Լոռոյ) և ամբացաւ յարու ուրեք՝ ՚նոյն իդ.)

Եւ որոնք վիրջապէս յայտնի են պատմական ժամանակներից իրեն թափստեան տեղի բոնութեան ու հալածանց հնթակայ հայ իշխանների ու ժողովրդի և պահեստ հայ գրականութեան աւանդ թանկագին գրչագիրների, մեր

բաղմատանց եկեղեցու սրբազան սպասների և անօթների:

Այդ այրերի թիւը շատ է, աւելի քան Ռ. Եր-
դընկեանի ծեղագրութեան մէջ յիշուածները. Նո որոշեցի
առ այժմ դիտել Սանահնի արենելեան ձորի գլխի քարայրը
և չաղբատի արևմտեան կողմը Կայեան բերդի հանդէպ
գտնուող Պարնի-էր և Զառնի էր (այր) կոչուածները:

Նախ գնացի տեսնելու Մանահնի մօտի այրերը. ան-
դընդախոր մի ձորի մէջ միմեանց դէմ առ դէմ երկու այ-
րեր երեւեցան. ձախակողմեանն աւելի գիւրամատչելի:

— Ըդտեղ ես կարամ մտնի, պատասխանեց իմ հարցին
մօտակայրում արածացնող մի հովուիկ. Էլ եմ մտէ, մէջը հին
ու մին բաներ կար, հանինք, կապերտ, հին փալասնի.

Այդ այրը իմ հաշումն չէր գալ ուրեմն, դա զըն-
նուած էր արդէն և եթէ մէջը բան կար՝ հանուած:

Տորն ի վայր գրեթէ սահելով և ոլոր մոլոր շաւիդ-
ներով հաղիւ հասայ հանդիպակաց քարայրի գլխի տա-
փարակին, որտեղից վայր նայեն իսկ զարհուրելի էր.
ծերպի գլխից մինչև ձորի յատակը կլինէր աւելի քան
70 արշին, սակայն ինչ որ սոսկալին էր՝ այդ նորա ուղ-
ղահայեաց դրութիւնն էր. Այրին կարելի էր համել մի-
միայն կախ ընկնելով պարանից. վերադարձայ վանքը
հաստատ մտագրուած հետո վերցնել պարան և մի սըր-
տոտ մարդ այդ նպատակի համար:

Մինչ ես սորան նորան թախանձում էի մի երկու կտոր
հաստ պարան գտնել՝ Գեղամ հայր սուրբն իր գուարճախօսու-
թիւններով ծաղրում էր իմ շփոթուած դէս ու դէն ընկնելը.

Վերջապէս զտնուեցաւ մի ըստ երեսութին քաջասիրտ
երիտասարդ, որ երկու կտոր ձիու նոխտի պարանը ձեռ-
քին, որով ես մի ուլ չէի ցած կախի այդքան բարձրու-
թիւնից, գոռաց.

— Գալիս եմ գալիս, դէ զնանք, խէր Աստուած:

Երեկոյեան 5 ժամն էր, որ այդպիսի հաստատուն
(*) գէներով բեռնաւորուած քայլերս ուղղեցինք դէպ ՚ի
քարայրը, ուր և հասանք կէս ժամից յետոյ:

Մեր հերոս երիտասարդը բլրի գլխից ցած նայեց
թէ չէ՝ լեղին բիշ մնաց պատուէր. նորա քաղդից մի
շոռալի անձրեւ տեղաց և հերոսս գլուխն աղատեց փոր-
ձանքից. և ճմարիտ, միթէ խելքը գլխին մարդ յանձն

կառնէր իր անձը ենթարկել այդ տեսակ վտանգի:

— Տղէր, հէյ, ձեզ եմ ասում, ծիծաղից թուլացած ձայնում էր պարանների վերայ պարկած վարդապետը հեռում կանգնող երկու գիւղական հանդիսատեսներին, մաշինին ասէք եղ շուռ գայ, կարմնջի մօտը կաղնի, ապրանք ունինք դի զելու, շուտ արա, հա:

— Դէ, լաւ, որ այդպէս է, գնանք չախպատ, ասաց ճարտարապետը:

— Գնանք, գնանք...

Նոտեցանք ձիաները, ճշմարիտն ասելով ինձ նստա ցրին ձիու վերայ և անձերին յաջորդող զով եղանակին բռնեցինք չաղբատի ճամբան:

Ճանապարհը անտանելի էր, լեռնուտ, մացառուտ, ձորեր ու բլուրներ, հա ձի նստիր, հա վեր արի, տան ջուելով ու քրոննելավ հաղիւ հասանք հանդիպակաց սարալանջը, ուր կարծես արքայական փառքով բաղմած է չաղբատի սրանչելակերտ վանքը յարակից կերտուածներով:

24 տարի առաջ էի տեսել այդ վանքը, ուր առաջին անգամ ուխտել էի նուիրել իմ անձը Աստուծոյ սպասահարկութեան գործին և այդ պատմավայրումն էի արժա. Նացել դպրութեան աստիճանի շնորհին. այն օրից մինչեւ այժմ — 24 երկար տարիների ընթացքում մի քար չէր աւելացած, մի ճեղք չէր կախնուած, մի նշոյլ չկար բարեփոխութեան, միակ փոփոխութիւնը՝ որ արժանայիշատակ Յովսէփի վ. Խարազեանի դպրոցը փակուած էր, այն չընադակերտ զանգակատանը, որ եթէ չենք սխալում, միակ դլխաւոր ներկայացուցիչն է չայկական ճարտարապետութեան, մի քանինոր փլրածքներ էին աւելացել, շատ դամբանների արձանազրութիւններ եղծուել կամ մամուռի պատել... Խոստացաւ մեզ արժ. չ. Դեղամը մօտիկ ապագայում վանքի վերանորոգութեան նկատմամբ կարևոր հոգացողութիւն անել և մի բարի յիշատակ թողնել իւր ետնից:

Երկրպագեցինք չաղբատայ սրանչելագործ ո. նշանին, երկրպագեցինք այդ սրբավայրում հանգչող հայ թագաւորների, նշանաւոր իշխանների շիրիմներին, հայ եկեղեցու պայծառ աստղեր Յովհաննէս սարկ. գիտնական վարդապետի (որի շիրմի տեղն անորոշ է. տես «Կիրակոս պատմ.»), Յովհաննէս ծործորեցի Պլուղ վարդապետի գե-

րեզմանին և այլոց և չ. վանահօր հիւրասիրութիւնը վայելելուց յետոյ՝ դուրս եկանք գործի:

Գիշերուանից խոստացել էր մի երիտասարդ ուղեկցել մեզ և մտնել ցանկացած այրերը: Առաւտահան սիրտս տրոփում էր մինչև որ կհամոզուէի թէ իրօր այրերը մի արժէք, մի պատմական նշանակութիւն ունին մեզ համար թէ ոչ, թէպէտ գիտէի արդէն որ դոցանից մէկից 1873 թ. պ. Ա. Երիցեանը հանել էր քանի մի բարացած ձեռագրեր. բայց իմ յոյսս մեծ էր, թէ շատ այրեր դեռ բոլորովին ուսումնասիրուած զինելով՝ գուցէ դեռ շատ գանձեր են պարունակում մեր խղճուկ պատմական գրականութեան համար. և իրաւունք էլ ունէի կարծել, որովհետեւ Լոռուայ մի քահանայ յայտնել էր ինձ թէ իրանց գիւղից վեր մի մեծ և անմատչելի ժայռում մի այր կայ, որտեղից մեծ քամու ժամանակ հայերէն ձեռագիր թղթի կտորներ են դուրս թռչում:

Բայց եկ տես որ, Ալիխանը չեկաւ, երեկ, ասում է, ձիուց վայր է ընկել և մի աչքը խարաբ արել:

— Հայր սուրբ, մի ճար արա, աղաշեցի ես. մարդ դտի:

— Եղբայր, էս մի հատ հմուտ քարագնա որ կայ Ալիխանն է, էլ էս սարերում ու ծմակներում տեղ չէ թողել, Էնքան մեղուկ փեթակ ա գտել ժայռերում որ...

— Թէ ոնց որ լինի, պէտք է նորան բերես:

Կէսժամ շանցած չ. Գեղամս առաջն արած Ալիխանին, մի աչքը կապած թաշկինակով, երկու ուրիշ գիւղացուն և երկու պարանի կտոր ձեռքին մօտ 40 արշին երկայնութեամբ (Աստուած պարան համարէր) կանգնեցին մեր առաջ:

— Օ՞սհօ, էս էլքեղ Ալիխանը, պըծաննը, դէ ել գնանք:

Ուրախութեանս չափ չկար ՚ի հարկէ, իսկ հայր սուրբիս զուարճախօսութեան ևս առաւել:

— Ե՞յ, կանդուխտօր, կանգնի, մաշինին ասա կանգնի, էս ա բեռը պտի շալակենք:

^{1/4} ժամուայ ճանապարհ էր մինչև քարագլուխը. պարապ շմալու համար սկսուեց մեր մէջ մի փորք զրոյց:

— Ցղայ, ասացի ես մի գիւղականին. ինչնւ է ձեր գիւղը չախպատ կոչում, գիտես:

— Բա, տէր հայր, Սանահնի վանքը վարպետն որ շինեց պրծաւ, ճ տարի ետքն էլ ուղարկուեց չախպատայ վանքը շինելու. վարպետը որ եկել է տեղը շատ է

հաւանել ու ասել է.—այ դրուտ որ «Հախապատ»:

՚Ի հարկէ անհաւանական մի աւանդութիւն, որով հետև կարծում ենք, որ Սանահին և Հախապատ անունները վանքերի շինութիւնից — ժ. դարից շատ առաջ էլ գոյութիւն պիտի ունենային,

—Ըտէնց չի. տէր հայր, առարկեց միւսը. «Յառաջադէմ» ում (գիւղի փոքր մատուռը) ուզել են վանք շինել, եկել տեսել են հմիկուայ վանրի տեղը, որ աղունիք կտուցով մանր բարերով պարիսպ են քաշել, ասել են ահաՀախալս պատ»:

Ըստ էլ անյաջող բացատրութիւն էր. Բայց մենք արդէն հասել էինք քարագլուխը:

Ոլոր մոլոր հազիւ մի մարդու անցնելու շաւզով ժայռի վերայից սկսանք իջնել ջրէկաձորը. ներքնը ձոր, անյատակ ձոր, եթէ ոտքի մէկը սայթաքէր կամ աշըը վրիպէր, անդունդն էինը ամենքս էլ. այդ շափողն էլ սակայն վերջ ունեցաւ. էլ ճանապարհ չկար և այդ վայրը ուղղակի ցած էր նայում մի քարայրի, ճիշտն ասած մի ծակի, որի ուղղութեամբ աջ կողմը մօտ 10 արշին հեռու բերդի նման մի սլստիկ բան էր երեսում. Երկու երիտասարդները մնացին այնտեղ. իսկ մենք յետ դարձանք նոյն շաւզով և ուրիշ ճանապարհով իջանք ձորը ճիշտ քարայրի տակ։

Այդտեղ ձորում ժայռի մէջ գուրս փորսւած մի լնդարձակ այր կայ, որ կոչում է Զառնի-էր, այր, երկու բաժանմունքով, փոքրն ըստ աւանդութեան կանաց համար. այդ այրը չասում են Հախմատի իշխան Զարէհից է շինուած պատերազմի ժամանակ պաշտպանուելու, որի մէջ կարող են տեղաւորուել մօտ 500 հոգի, և ուր քարափից քարակ հոսանքով իջնում է պատուական ջուր։

Այրի և այն փոքրիկ տափարակի ճիշտ մէջ տեղը, ուր թողինք մենք 2 գիւղացւոց, գտնում է բերդակը, որ Պարնի-էր է կոչում, որովհետև ինքը իշխանն իւր ընտանիքով այդտեղ է եղել ապրելիս և 10—12 արշին հեռու «ծակ-քար»-ը, շտեմարան նորա գանձուց և հարստութեան։

Վերևից 2 տղայք պարանը ցած թողին մինչև բերդակը, իսկ ներքեից Ալիսանը այծի նման մազլցելով հասաւ բերդակին և բարձրացաւ պարսպի գլուխը, պարանը կապեց մէջքից և սկսաւ ինչպէս մողէս սահել դէպի ծակ-քարը։ Ես ահից երեսս շուռ տուի, որ չտեսնեմ նորա ընկ.

նելը, որ անխուսափելի էր թւում ինձ. իսկ ուղեկիցներս ծիծագելով սիրտ էին տալիս ներքմից:

— Կեցցես, կեցցես, աղաղակ բարձին ընկերներս և ես դառնալով տեսայ Ալիխանի յանկարծակի ներս թռչել Ետակ քարի բերնից:

Կարծես մի ծանր բար վայր ընկաւ մէջքիցս.

Վերսկսեց Հ. Գեղամն իւր կատակները մինչև որ մի կէս ժամից յետ մի թրմփոց լսուեց. վրայ ընկանք ընկած իրին և տեսանք, որ Ալիխանի տրխի ծուպով կապած թղթերի մի կոյտ է, — մագաղաթէ ամեն տեսակ և թրղթէ հնագոյն ժամանակի գրչագիրների բազմաթիւ կտոր. ներ, խոշոր, խոշոր կազմի կաշիներ, գրչագիրների պատկերների կտորտանք եալին: Իմ ուրախութեանը չափ չկար. մի կէս ժամից յետոյ երկրորդ թրմփոցը եղաւ. դարձեալ տրխի ծուպով կապած գրչագրերի հատուածներ. Տրեխների ծուպերը սպառուել էին, այդ պատճառով երրորդ թրմփոցը արդէն Ալիխանի գուլպայով ընդունեցինք:

Հայր սուրբ ձայնը ցածրացրել էր: Ալիխանը իջաւ և ծոցից ծանր ու բարակ հանեց մագաղաթէ մի տետր, որ իրակ աւելի թանկագին բան՝ պահնել էր ինձ համար որպէս «սիւրպիրիզ» վարձատրութիւն ընդունելու ժամանակ:

Ալիխանը պատմում էր, որ այրը շատ մեծ է, մինչև ծնկները գրեթէ աւազ, այս ամենը հանել է աւազից վայտի կտորով քչիորելով, ուստի ասում էր պէտք է հետը դործիրներ ունենալ, որ աւազի միջից ջոկենք գրչագրի կտորները կամ գուցէ հէնց ամբողջ գրքեր:

Ես հասել էի իմ նպատակիս. այրումոչ միայն բարացած անընթեռնլի, գրչագիրներ կան, այլ և ողջընթեռնլի, որովհետև իմ ստացածս, որ մի մեծ թաշկինակ լիրն էր, պարունակում է երկու տեսակից էլ, այն է ինչպէս բարացած ձեռագիրների կտորներ, այնպէս էլ նոր բարացող, փթող, նոյն իսկ փթած, այլև մաքուր՝ կարծես այսօրուայ նոր գրած մագաղաթի և թղթի վերայ, ամենահին երկաթագրերից մինչև թղթեայ բոլորգիր գրչագիրները:

Որովհետև այսօրերս ես կատարելու եմ մի նոր ուղետրութիւն հնութեանց այդ աշխարհում, ուստի և ձեռքբերած նիւթերի մասին յաջորդ անգամ:

Ցիկծ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ